

կը գտնենք ուրիշ մը՝ Անտոն եպս. եւ զինքն՝ Երուսաղէմ, ուր կ'այցելէ ուխտաւորութեամբ (Ձեռ. Թ. 661, Երուսաղէմ, Աղաւնունի եպս. Մխաթան + Լ Այցելւոյ, էջ 30): Հոն 1583ին կը նորոգէ Յայսմաւուրք մը (Ձեռ. Թ. 28, Երուսաղէմ): 1590ին տակաւին հոն է եւ կը կազմէ Սաղմոսարան եւ Ժամագիրք մը (Ձեռ. Թ. 265, Երուսաղէմ, Աղաւնունի եպս., Նոյն, էջ 30-31): 1591ին տակաւին Երուսաղէմ է (Աղաւնունի եպս. էջ 275) եւ կ'ընդօրինակէ հոն Սաղմոս մը (Ձեռ. Թ. 1597, Երուսաղէմ):

Հասուցած է Թոմարզայի մէջ շատ մը աշակերտներ որոնք կը յիշեն իրենց ուսուցիչը «որ քաղում աշխատութեամբ սևուց եւ ուսուց զիս ի գործս այս արհեստի»:

Մասնաւորապէս Գրիգոր անուն քահանայ մը, գրիչ՝ Աւետարանի (1572ին) Գանձարանի (1576) Շարականի (1582) եւ Ճաշոցի (1588), գրուած ամէնքն ալ Թոմարզայի մէջ, կը յիշէ զայն իբր «գուսուցանող վարպետն» իւր, որ իբր «հեզասոցի եւ պիսկոպոս» «քաղում աշխատութեամբ» կամ «ջանիւ ուսուց անգ»:

Այս երկու բեղմնաւոր եկեղեցականները՝ ինչպէս կը տեսնուի՝ Կեսարիոյ մէջ ճիշդ մանկութեան օրերուն Գրիգորի կը գործէին արդիւնաւոր կերպով: